

վեզնութիւնը արդարացնելու համար, զխմեցին ամէն տեսակ սուտերու և զինուորներու բանակատակըին վրայ կրակելու զագրելի միջոցին :

Ճէվատ պէյ կ'աւելցնէ թէ Հայերը բաղմաթիւ զէնքեր գնած են և թէ մէկ քանի: ամսուան միջոցին Ատանա ներմուծուած են 12,000 կտոր հրացաններ :

Ճիշտ է որ Հայերը զէնքեր գնած են : Սակայն ներածուած բոլոր մթերքը Հայերու կողմէ չէ գնուած : Ընդհակառակը, — ինչպէս արդէն ամէն տեղ — այս զէնքերուն մեծագոյն մասը առնուած է Իսլամներու կողմէ :

Հոս հարցում մը կը ցղուի :

Հայերը իրաւունք ունին զէնքեր գնելու :

Իմ կարծիքով, այս ինդիքը գլխաւոր (կարեւորութիւն մը ունի Ատանայի զէնքերուն լուծման համար, և կ'արժէ որ ատոր պատասխանենք ամէն բանէ առաջ :

Կը կարծեմ թէ անկարելի է Հայերուն զլանալ բոլոր օսմանցիներուն հասարակաց եղող իրաւունք մը : Եւ Հայերը նոյն իսկ ամէն ժամանակ — և մինչև ցարդ — նշաւակ եղած ըլլալով ամէն տեսակ յարձակումներու, կեղեքումներու և կոտորածներու, կայսրութեան միւս տարրերէն աւելի իրենց օրինաւոր ինքնապաշտպանութեանը համար զինուելու հարկին տակ կը դրտնուին : Կառավարութիւնը Հայերը այն պարագային միայն պէտք էր արգիլել, երբ առանց բացառութեան բոլոր օսմանցիներու զէնք կրելու արտօնութիւնը վերցնէր և զանոնք կաստիկապիս զիեաքապի ընկեր : Բայց մերժել այս իրաւունքը ցեղի մը՝ որ զէնքին կը զիմէ մի միայն ինքնապաշտպանութեան համար, մինչդեռ զայն կ'արտօնեն յարձակող տարրերու — ինչ որ են